ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾԱԳՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ԱՇԽՈՒՆՋ ՊՈՂՈՍՅԱՆ

Հայկական գորգերի ու կարպետների բնորոշ տիպերի առանձնահատկությունների բացահայտման, ինչպես նաև համաշխարհային գորգարվեստի համակարգում դրանց արժեքավորման կարևորագույն նախապայմաններից մեկը մեր տարածաշրջանում գորգագործության ծագումնաբանության ուսումնասիրումն է: Հայտնի է, որ գորգարվեստն ուսումնասիրման առարկա է XIX դ. վերջերից, երբ եվրոպական խոշոր թանգարանները սկսեցին հետաքրքրվել արևելյան գորգերով և կազմակերպել դրանց առաջին ցուցահանդեսները: Սկզբնապես մի շարք արվեստաբաններ, որոնց թվում՝ շվեդ հայտնի արևելագետ Ֆրիդրիխ Մարտինը, արևելյան գորգերի համակարգում տարանջատեցին գորգերի մի խումբ, որը, նրանց կարծիքով, ծագել է Հայկական լեռնաշխարհում և վերաբերում է հայոց մշակույթին[1]: Մարտինն այդ խմբին առաջին հերթին դասում էր այդ ժամանակներից արդեն լայն հետաքրքրության արժանացած վիշապագորգերը /Նկ.1/: Բայց դիտական շրջանառության մեջ արդեն իսկ կային առևտրականների կողմից արևելյան գորգերին տրված ապրանքային պիտակներ, որոնք ներկայացնում էին գորգի առևտրով հայտնի քաղաքներ, տարածաշրջաններ ու այնտեղ բնակվող ժողովուրդներ: Այդ կերպ էլ, XIXդ. վերջերից և հատկապես XX դ. առաջին քառորդից լայնորեն կիրարկվում են «Թավրիզ», «Գյանջա» «Շիրվան», «Դերբենտ»,«Թուրքմեն», «Աֆշար», «Շահսևան», «Բելուջ», «Բախտիար», «Կարաման» և այլ նմանատիպ տեղանուններ ու ցեղանուններ:

Նկ. 1

Ուսումնասիրողներից շատերը չունենալով այդ տարածաշրջաններին ու ժողովուրդների պատմությանն ու տնտեսամշակութային հատկանիշներին վերաբերող կոնկրետ պատմաազգագրական տվյալներ ու պատկերացում, մեխանիկորեն փորձեցին հենց այդ ժողովուրդներին էլ վերագրել

---

1 Այս մասին տես՝ Y. G a n z h o r n. La Tapis Cretien Orientals. Koln, 1989, p. 338; *Ա. Պ ո ղ ո ս յ ա ն. Առաջավոր Ասիայում գորգագործության ծագման հարցի շուրջ.– Հայ ժողովրդական մշակույթ, X (զեկուցումների հիմնադրույթներ). Երևան,1999, էջ 64-66: Ն ո ւ յ ն ի Այսպես կոչված «քոչվորական» գորգագործության ծագման մասին.– Հայոց պատմության և մշակույթի հարցեր, նվիրվում է հայագիտության հովանավոր Ալեք Մանուկյանի հիշատակին (զեկուցումների հիմնադրույթներ). Երևան, 1997, էջ 33-34:*

տարածաշրջանում գորգագործության ծագման և հետագա զարգացման փաստը: Դարասկզբից թուրքամետ գերմանացի և ամերիկացի արևելագետները (Ա. Ուֆամ-Պոոպ, Կ. Էրդման և այլք), իսկ 1930-40-ական թվականներին թուրք արվեստաբանները (Օքտայ Ասլանապա, Շերաբե Էդկին, Բալքիս Բալփինար, Նեյաթ Դիարբեքիրլի և այլն) այդ անվանումների հետ լայն շրջանառության մեջ են դրել նաև «քոչվորական գորգ», «սելջուկյան», «մուսուլմանական» հասկացությունները, որոնք հաճախ ընդունվում են իբրև առհասարակ արևելյան գորգերի ընդհանրացված անվանումներ[2]: Այդպիսով, չնայած Հայկական լեռնաշխարհում և մերձակա տարածաշրջաններում գորգագործության վաղ ավանդույթներ լինելուն վերաբերող մի շարք ուսումնասիրողների կողմից արդեն արված և հետագայում էլ արվող պնդումներին[3], իշխող են մնում այդ զբաղմունքին միջինասիական ծագում վերագրող տեսությունները: Դրանց հետևորդները դտնում են, որ Առաջավոր Ասիայում, գորգագործության ու գորգարվեստի, և ըստ այդմ վերը հիշատակված վիշապագորգերի ծագումը կապված է տարածաշրջանում XI–XIIդդ. սկսված սելջուկյան և դրան հաջորդած ալթայան ու միջինասիական ծագում ունեցող քոչվոր այլ ցեղերի հարաճուն ներթափանցումների հետ[4]: Այդպիսով, համոզմունք է հայտնվում, որ Հայկական լեռնաշխարհում և առհասարակ Առաջավոր Ասիայում գորգագործությունը և կարպետագործությունը սկզբնավորվել են վերը նշված դարերից: Կուրտ Էրդմանի կարծիքով, դա հատկապես վերաբերում է խավահանգուցային գործվածքին՝ գորգերին, «որոնք Փոքր Ասիայում առաջին անգամ հայտնվեցին XI դարից ոչ շուտ»[5]: Ըստ որում, չնայած վենետիկցի ճանապարհորդ Մարկո Պոլոյի հայտնի վկայությանը՝ Կեսարիայում և շրջակայքում հայերի և հույների կողմից բարձրորակ գորգեր գործելու մասին[6], նա դտնում է նաև, որ «Անատոլիայում հույներն ու հայերը առհասարակ ոչ մի առնչություն չունեին գորգագործության հետ»[7]: Շարունակելով զարգացնել այդ թեզը, թուրք արվեստագետ Շերարե Էդկինը գրում է, որ «Կովկասում դորգեր գործել են XIV դարից հետո»[8]:

---

2 Kurt Erdman. Der Orientalische Knupteppiche. Tubingen, 1975; նույնի՝ Die Geschichte der früher Turkische tepiche. London, 1977; Jetcin Serare. Yarlu Caucasian Carpets in Turkey. Vol. 1, 2, London,1978; նույնի՝ Historical Turkish Carpets. Istanbul,1981.

3 Արմենակ Սաղդյան. Հայկական գորգերը ԺԵ–ԺԹ դարերում.– «Անահիտ», գիրք 1-6, Փարիզ, 1932: Նույնի՝ Հայկական գորգեր.– «Անահիտ», գիրք1-6, Փարիզ, 1939: Հ. Քյուրայան. Գորգը Հայոց մոտ. Վենետիկ, 1947: Հ. Հ. Գայայան. Հայկական գորգագործությունը Ռումի-սելջուկյան սուլթանությունում (XIII-XIY դդ.).– «Պատմա-բանասիրական հանդես», 1977, N 1, էջ 168-176:

4 Ֆոլկմար Ганцхорн. Христиано-восточный ковер – один из аспектов армянского искусства.– Четвертый международный симпозиум по армянскому искусству (тезисы докладов). Ереван, 1985, с. 73.

5 Kurt Erdman. Նշվ. աշխ., էջ 17:

6 Марко Поло. Путешествие. Л., 1940, с. 17-18.

7 Kurt Erdman. Die Geschichte der früher Turkische tepiche, p. 14.

8 Jetcin Serare. Նշվ. աշխ., հ. 1, էջ 3–4:

Վերջին տասնամյակներում, գորգագործությամբ հայտնի ժողովուրդների տնտեսական կենցաղին ու առհասարակ պատմությանը նվիրված ուսումնասիրությունների երևան գալուց հետո, թեև հետազոտողների մի մասի համար ակնհայտ դարձան շրջանառության մեջ եղած անվանումների մի ճնշող մասի, և տարածաշրջանում գորգագործությանն արևելյան ծագում վերագրելու տեսակետի չհիմնավորված լինելու փաստը[9], այնուամենայնիվ, Հայկական լեռնաշխարհում գորգագործության առաջացումը շարունակում է բացատրվել քոչվորների մշակութային ազդեցությամբ[10]:



Նկ. 2

Սույն ուսումնասիրությամբ կփորձենք ցույց տալ դրա անհիմն ու մտացածին լինելը և առհասարակ, ձեռնարկել համաշխարհային մշակույթի համակարգում հայոց գորգարվեստի արժեքավորման գործընթացը: Այդ ասպարեզում, անշուշտ, կարևոր նախապայմանը գորգագործության ծագումնաբանության հետազոտումն է, որը դեռևս ըստ պատշաճին կատարված չէ: Հիմնականում, հենց դրա պատճառով է նաև, որ հայկական գորդերը գիտական առումով ըստ արժանվույն գնահատված չեն:

Ի՞նչ են հաղորդում սկզբնաղբյուրները:

Պատմական Հայաստանի տարածքում եղած պեղումնավայրերից հայտնաբերվել են մ.թ.ա. IV–III հազարամյակներով թվագրվող գորգադործական աշխատանքային գործիքներ, մ.թ.ա. II–I հազարամյակներին վերաբերող դորգի ու կարպետի պատառիկներ[11]: Մասնավորապես՝ դորգի պատառիկներ հայտնաբերվել են Սրթիկի դամբարանադաշտի պեղումներից (XII–XI դդ.,մ.թ.ա.), իսկ մ.թ.ա. VII–VI դդ. թվագրվող Կարմիր բլրից (Երևան) հայտնաբերվածների թվում բացի խավահանգուցայիններից կան նաև ասեղնադործությունների մնացուկներ: Այս ամենից զատ, հատկապես կարևորում ենք մ.թ.ա. V դ. վերաբերող, Սանկտ Պետերբուրգի Էրմիտաժում պահվող նշանավոր «Պազիրիկ» գորգը, որը հայտնաբերվել է 1949 թ. Լեռնային Ալթայի Պազիրիկ կուրգանի N 5 դամբարանից: Պեղումների ղեկավար Ս. Ռուդենկոն, համեմատելով դրա և հարևան Բա-

---

9 Այս կապակցությամբ տե՛ս Y. G a n z h o r n. Նշվ. աշխ.:

10 Տե՛ս օրինակ՝ Y o h n W e r m i t t e. Richard E. Wright. The Tabris Hypothesis, the Dragon and Related Carpets. London, 1992, p. 34; H a n n a E r d m a n n. Die Bezeichnung der vorosmanischen Teppichmuster zu den gleichzeitigen Ornamenten. Hali. Vol. 1, London, 1978, N 3, p. 228-234.

11 Э. В. Х а н з а д я н. Культура Армянского нагорья в третьем тысячелетии до. н. э. Ереван,1973, с.82; С. А. Е с а я н. Древняя культура северо-восточной Армении. Ереван,1973, с. 208–209; Նույնի՝ Культура племен северо-восточной Армении. Ереван, 1978, с.164-178; Т. С. Х а ч а т р я н. Древняя культура Ширака. Ереван, 1975, с. 139, 258, 264; А. С. В е р х о в с к а я. Текстильное изделие из раскопок Кармир Блура.– В кн.: Кармир Блур, 3, результаты работ 1951-53 гг. Ереван, 1955, с. 68-69.

չագարի կուրգանից հայտնաբերված գորգերի ու թաղիքների գեղազարդման տարրերը, արդեն այն ժամանակ հանգել էր պազիրիկյան գորգի առաջավորասիական ծագում ունենալու տեսակետին[12]: Ասենք, որ այս գորգի դաշտի կենտրոնի խաչաձև վարդյակը (նկ. 2) մ.թ.ա. II–I հազարամյակի կեսերին վերաբերող ասորարաբելական ու վաղ հայկական (ուրարտական) որմնանկարչության ե խճանկարի գեղազարդման համակարգին բնորոշ տարր է[13]: Նույնը վերաբերում է նաև եզրագոտիների կենդանակերպ հորինվածքներին, հեծյալներին ու դրանց հանդերձանքի մասերին: Ավելին՝ էրմիտաժի քիմիկոս-ներկաբանների հետազոտություններով բացահայտված է, որ այդ գորգի թելերի կարմիր գույնը սացված է Արարատյան դաշտի «որդան կարմիր» ներկանյութից[14]: Բացի այդ, այս գորգը գործված է հայկական գորգերին բնորոշ տեխնիկայով՝ սիմետրիկ (կամ կովկասյան) հանգույցներով, այն դեպքում, երբ Բաշադարի կուրգաններից հայտնաբերված գորգերի հանգույցները, և առհասարակ կատարումն արմատապես տարբեր են[15]: Հատկանշական է, որ սիմետրիկ հանգույցներով է գործված նաև կարմիր բլրից հայտնաբերված գորգի պատառիկը[16]: Ս. Ռուդենկոյի կարծիքով, «Լեռնային Ալթայի մեծաքանակ ղարդանախշերի թվում բոլորովին չկան այնպիսիք, որ նման լինեն պազիրիկյան №5 դամբարանից հայտնաբերված գորգի վրա պատկերվածներին»[17]: Վերոհիշյալները, անշուշտ, հաստատում են «պազիրիկյան» գորգն Առաջավոր Ասիայի և նրան հարող հնագույն քաղաքակրթություններում ստեղծված լինելու Ռուդենկոյի տեսակետը:

Միաժամանակ, ըստ իս, այդ գորգի գեղազարդման համակարգի և տեխնիկատեխնոլոգիական առանձնահատկությունների բնորոշ լինելը վաղ հայկական ավանդույթներին և, մասնավորապես, նաև արարատյան «որդան կարմիր» ներկի առկայության փաստը, թույլ են տալիս առաջ քաշել այդ գորգի հայկական ծագում ունենալու վարկածը: Այդպիսով, ակնհայտ է մինչև մեր ժամանակները պահպանված հնագույն գորգերի նմուշների անմիջական առնչությունը Հայկական լեռնաշխարհի, պատմական Հայաստանի կամ առհասարակ հայկական մշակութային տարածքի ու ավանդույթի հետ:

Պեղումներից հայտնաբերված նմուշներից բացի, Հայաստանում գորգագործության վաղ ավանդույթներին վերաբերող վկայություններ են հաղորդում գրավոր աղբյուրները: Մ.թ.ա. V–IV դդ., Հայաստանին վերա-

---

12 С. И. Руденко. Древнейшие в мире художественные ковры и ткани. М., 1968, с. 55.

13 З. А. Рагозин. Древнейшая история Востока. История халдей с отдаленнейших времен до возвышения Ассирии. СПб., 1902, с. 74–75.

14 Л. С. Гавриленко, Р. Б. Румянцева, Д. Н. Глебовская. Применение тонкослойной хромотографии и электронной спектроскопии для анализа красителей древних тканей.– Исследование, консервация и реставрация этнографических предметов (тезисы доклада). Рига, 1987, с. 17–18.

15 С. И. Руденко. *Նշվ. աշխ., էջ 48–49, սխեմա 36–37:*

16 А. С. Верховская. *Նշվ. աշխ., էջ 68:*

17 С. И. Руденко. *Նշվ. աշխ., էջ 49:*

բերող գորգերի մասին հիշատակում է Քսենոփոնը[18]: Արդեն մ.թ. I դ. հռոմեացի պատմագիր Տակիտոսը, հիշատակելով Արտաշատում եղած ծանր ու թավ գորգերի մասին, փաստորեն, արձանագրում է նաև նախորդ դարերի ավանդույթների ու դրանց զարգացման գործընթացը[19]: Հայ պատմիչներն ու մատենագիրները նույնպես բազմիցս հիշատակում են գորգերի ու գործվածքի այլ տեսակների, դրանց տեխնիկատեխնոլոգիական հարցերին վերաբերող տեղեկություններ: Առավել կոնկրետ, Աղվանից Ջեվանշիր իշխանի առնչությամբ Աղվանից պատմության հեղինակները վկայում են VI–VII դդ. Արցախի գունագեղ կարպետների ու գորգերի մասին[20]: Գրավոր աղբյուրներում եղած տեղեկություններից պարզվում է, որ Հայաստանում գորգագործությունը բուռն վերելք էր ապրում հատկապես VII–XIII դդ.[21]: Հայկական գորգերն այդ գարաշրջանում հարստության, հասարակության մեջ անհատի գրված դիրքի չափանիշ էին[22]: Դրանց առանձնակի կարևորությունն է փաստում խալիֆաթի կողմից Հայաստանից գանձվող տարեկան հարկերի թվում նաև քսան գորգ լինելը[23]: Արաբապարսկական աղբյուրներում տեղ գտած վկայություններից պարզվում է, որ խալիֆաթի գարաշրջանում հայկական գորգերը դերիշխում էին ողջ Արևելքի շուկայում, և որ հատկապես կարևոր է, դարձել էին ընդօրինակման առարկա և ճանաչված էին «հայկական գորգ» անունով[24]: Խալիֆաթի վիթխարի տարածքում հատկապես լայն պահանջարկ էին վայելում հայկական աղոթագորգերը: Ակնհայտորեն, հիմնականում այդ հանգամանքով է պայմանավորված գորգագործության կարևորությունը միջնադարյան Հայաստանի տնտեսական կյանքում: Գրավոր ու պատկերային նյութերը հնարավորություն են տալիս մեզ որոշ չափով պատկերացում կազմել նաև այդ դարաշրջանի հայկական գորգերին բնորոշ զարդանախշերի ու գունային երանգների մասին: Մասնավորապես, XII դ. արար ուղեգիր Յակուտի շնորհիվ մեզ է հասել Կարին քաղաքում գործված VII դ. վերաբերող մի համրավավոր «հայկական» աղոթագորգի նկարագրություն, որից իմանում ենք, որ դրա գեղազարդման համակարգը ներկայացնում էր պալատական միջավայրին բնորոշ պարտեղային մի շքեղ տեսարան[25]:

Ընդհանուր առմամբ, բնական է ենթադրել, որ հայկական գորգերի բարձր վարկը կապված էր գունահորինվածքային ու տեխնիկատեխնոլո-

---

18 Ք ս ե ն ո փ ո ն. Անաբասիս, բնագրից թարգմանեց ու ծանոթագրեց Ս. Կրկյաշարյանը. Երևան, 1975, էջ 164:

19 Տ ա կ ի տ ո ս, քաղեց և թարգմանեց Գ. Սոանիկյան. Երևան, 1941, էջ 61:

20 М о в с е с К а л а н к а т у а ц и. История страны Алуанк. Пер. с древнеармянского, предисловие и комментарии Ш. В. Смбатяна. Ереван, 1984, с. 60 – 61.

21 Я. М а н а н д я н. О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен. Труды, т. VI, Ереван, 1985, с. 162; Հ. Զ ո ր յ ա ն. Արաբական շրջանում ֆեոդալական Հայաստանի քաղաքի և գյուղի միջև ստեղծված հակադրությունը.– «Տեղեկագիր» ՀՍԽՀ գիտության և արվեստի ինստիտուտի, 1928, N 3, էջ 3:

22 А. М е ц. Мусульманский ренессанс. М., 1973, с. 254.

23 А. Т е р - Г е в о н д я н. Армения и Арабский халифат. Ереван, 1977, с. 200-201; Հայ ժողովրդի պատմություն. Հ. 2, Երևան, 1984, էջ 384:.

24 А. М е ц. Նշվ. աշխ., էջ 364:

25 А. Т е р - Г е в о н д я н. Նշվ. աշխ., էջ 204:

գիական որոշակի առանձնահատկությունների հետ, որոնց հնարավոր էր հասնել տևական ժամանակաընթացքում կուտակված փորձի ու հմտությունների, ինչպես նաև գորգերի արտադրության մեջ մասնագիտացված հատուկ արհեստանոցների միջոցով: IX–XIII դդ. հայ պատմիչների, մասնավորապես, Ստեփանոս Օրբելյանի հաղորդումներից պարզվում է, որ Հայաստանում արքունիքին, նախարարական տներին ու վանական խոշոր համալիրներին կից կային այդպիսի գործատուն-արհեստանոցներ, որոնցում ոստայնանկների հետ աշխատում էին նաև նկարիչներ, ներկարարներ և գորգագործության հետ կապված այլ մասնագետներ[26]: Նույն դարաշրջանին վերաբերող արաբական գրավոր աղբյուրներում Հայաստանում գորգագործությամբ առավել հայտնի կենտրոններ էին համարվում Այրարատը, Բարձր Հայքը, Վասպուրականը, Սյունիքը, Արցախը:

Այս ամենը, ինչպես տեսնում ենք, կար մինչև XI–XII դդ., այսինքն, նախքան սելջուկների մուտքը Հայաստան:

Խնդրի ուսումնասիրման ասպարեզում, անտարակույս, մեծ կարևորություն է ներկայացնում նաև «գորգ» բառի ծագումնաբանությունը: Ակադեմիկոս Գրիգոր Ղավանցյանը գտնում է, որ մ.թ.ա. II հազարամյակին վերաբերող խուռի-խեթական արձանագրություններում եղած «կուրկա» բառը դրա նախատիպն է, և ունեցել է ծածկոցի՝ մասնավորապես ձիու ծածկոցի նշանակություն[27]: Կարևոր ենք համարում շեշտել, որ Պազիրիկից հայտնաբերված գորգի եզրագոտիներից մեկը ծածկված է թամբին փռած ծածկոցին նստած ձիավորների պատկերներով[28]: Ուշագրավ է, անշուշտ, որ Հայաստանի մի շարք պատմաազգագրական շրջաններում՝ Գուգարքում, Տավուշում և այլուր իբրև «կարսլետ» բառի հոմանիշ մեր ժամանակներում էլ գործածական են «ձորձ» և «ձունձ» բառերը[29]: Դրանք բազմիցս հիշատակվում են հայ մատենագիրների երկերում[30] և մեր կարծիքով «գորգ» բառի տարբերակներ են:

Այդպիսով, ակնհայտ է, որ պատմական Հայաստանում և հարակից տարածաշրջաններում գորգարվեստի ավանդույթների առկայությունը ոչ մի կերպ չի առնչվում սելջուկյան կամ մեկ այլ ներթափանցման ու մշակութային ազդեցության հետ: Եվ չնայած վերը շարադրված տեղեկությունները մեծ մասամբ հրատարակված են ու հանրահայտ, այնուամենայնիվ, միջնադարում Հայաստանը գորգագործության կենտրոն լինելու փաստը, ուսումնասիրողների մի ստվար մասի կողմից առ այսօր էլ անտեսվում է: Ո՞րն է պատճառը:

Գորգարվեստի ծագումնաբանության, գորգերի առանձին տիպերի ծագման ու տարածման շրջանների բացահայտման ասպարեզում առկա են բազմաթիվ բարդություններ: Ձևավորվելով որոշակի էթնիկական մի-

---

26 Պատմութիւն Նահանգին Սիսական, արարեալ Ստեփանոսի Օրբելիան արքեպիսկոպոսի Սիւնեաց. Թիֆլիս, 1910, էջ 112–113:

27 Г. Капанцян. Историко-лингвистические работы. Ереван, 1957, с. 354–355.

28 С. И. Руденко. Նշվ. աշխ., էջ 45:

29 Ե ր. Լ ա լ ա յ ա ն. Բորչալուի գավառ.– «Ազգագրական հանդես», գիրք 9, Թիֆլիս, 1902, էջ 237–238:

30 Այս մասին տե՛ս Նոր բառգիրք Հայկազեան լեզուի. հ. Ա, Երևան, 1979, էջ 1075, 1055, հ. Բ, Երևան, 1979, էջ 161 և այլն:

ջավայրում որոշակի պահանջների բավարարման համար, գորգը հազարամյակների ընթացքում տվյալ էթնիկական միավորի հետ ենթարկվել է տեղաշարժերի ու փոխազդեցությունների, տեղայնացվել այլ էթնիկական միջավայրերում, ստացել գործածական նոր ոլորտներ: Անկասկած, այդ ճանապարհով ձևավորվել են նաև գորգի գեղազարդման նորանոր համակարգեր ու տեխնիկատեխնոլոգիական առանձնահատկություններ: Ճակատագրի բերումով, այս ամենը առավելապես վերաբերում է հայոց գորգերին: Հետևաբար, գորգերի ծագումնաբանական խնդիրների պարզաբանումը, ըստ էության, առաջին հերթին պահանջում է պատմաազգագրական հետազոտությունների խորը գործընթաց, որի արդյունքում հնարավոր է բազմաբնույթ աղբյուրների համադրությամբ բացահայտել վաղագույն գորգագործությամբ հայտնի տարածաշրջաններ, դրանցում բնակված ցեղերն ու ժողովուրդները, հետևել դրանց տեղաշարժերին ու մշակութային համակարգի հետագա դինամիկային: Այդ աղբյուրները չատ թե քիչ պատկերացում են տալիս նաև գորգերի վաղ տիպերի գեղազարդման համակարգերի մասին: Բայց նկատենք, որ արևմտյան ուսումնասիրողները հետամուտ են առևտրական նպատակների և, բնականաբար, պատմաազգագրական հետազոտություններ կատարելու առանձնապես մեծ կարիք չեն էլ զգում:

Գորգարվեստի ծագումնաբանության, գորգերի տիպաբանության ասպարեզում արևմտյան ուսումնասիրողների կողմից անտեսված է նաև մեկ այլ կարևորագույն հանգամանք: Սելջուկ-թուրքմենների, ապա նրանց հաջորդած մոնղոլ-թաթարների ու միջինասիական այլ քոչվոր ցեղերի ավերիչ արշավանքների և հատկապես հայոց պետականության կորստի սլատճառով զանգվածային բնույթ ստացած արտագաղթերից Հայաստանում նվազում է բնիկ հայ բնակչության, հատկապես քաղաքային բնակչության թվաքանակը: Դրա փոխարեն զգալիորեն ստվարանում են Փոքր Ասիայի արևմտյան տարածքներում, հյուսիսարևելյան Անդրկովկասում, Բալկաններում ու Տրանսիլվանիայում, Ղրիմում ու Լեհաստանում նախկինում արգեն ձևավորված հայկական գաղթօջախները: Մինչդեռ բուն Հայաստանում հիմնավորվում են միջինասիական ծագումով բազմաթիվ քոչվոր ցեղեր, որոնց համար տարածաշրջանը դառնում է հարմար արոտատեղիների ու մշտական ավարառությունների վայր: Այդպիսով, որոշակի փոփոխություն է կրում Հայաստանի ժողովրդագրական պատկերը: Այդ պայմաններում տնտեսության ու առհասարակ մշակույթի համընգհանուր անկման հետ անկում էր ապրում նաև գորգագործությունը: Մասնավորապես, վերանում են գործատները, այդ թվում գորգի խոշոր արհեստանոցներն ու ապրանքային կազմակերպված արտադրությունը: Հայաստանում գորգագործության ավանդույթները շարունակվել են միայն տնայնագործության ձևով՝ Աբցախում, Սյունիքում, Գուգարքում, Տավուշում, մասամբ նաև Բարձր Հայքի ու Վասպուրականի մի շարք գավառներում: Դրանք շարունակում էին զարգանալ նաև Փոքր Ասիայի արևմտյան և Անդրկովկասի հյուսիսարևելյան տարածքներում, որտեղ ստվար խմբերով բնակություն էին հաստատել Այրարատից, Բարձր Հայքից, Սյունիքից, Արցախից ու Վասպուրականից, այսինքն՝ հայոց գորգագործության ա-

վանդական կենտրոններից արտագաղթած հայերը[31]: Այսպիսով, տեղի ունեցավ պատմամշակութային մի լայնածավալ գործընթաց, որի արդյունքում հայոց մշակութային համակարգի՝ այդ թվում գորգարվեստի ավանդույթները տեղայնացվեցին և հետագայում՝ հատկապես XVIII–XIX դդ. բուռն զարգացում ապրեցին վերը հիշատակված տարածաշրջաններում:

Միաժամանակ հայտնի է, որ հայոց պետականության անկումով, տարածաշրջանի պաշտոնական վարչաքաղաքական անվանացանկից, մեծ մասամբ, դուրս էին մղվել «Հայաստան» և առհասարակ հայոց էթնոտոպոնիմային ներկայությունը մատնանշող տերմինները: Կարծում ենք, որ հենց այս հանգամանքով էր պայմանավորված նախորդ դարերում գորգերի ապրանքային անվանումների՝ այդ թվում շրջանառության մեջ եղած «հայկական» գորգ տերմինի մոռացության մատնվելու փաստը: Մյուս կողմից, հայոց գորգը, ռազմավարի ու թալանի ճանապարհով դառնում է քոչվորների սեփականություն և, ժամանակի ընթացքում որոշ ցեղերի կողմից յուրացվելով (շահսևան, բախտիար, թարաքյամա, կարափափախ, ավշար, յուրուկ և միջինասիական ծագում ունեցող քոչվոր այլ ցեղեր), կրում է որոշակի գունաոճական լրացումներ, տարածվում այդ եկվոր ցեղերով բնակեցված տարածաշրջաններում և աստիճանաբար սկսում է տարբերակվել այդ նոր ցեղանվանումներով: Ի հավելումն ասվածի, հայտնի է, որ հայոց մոտ, կենսապահովման հիմնական ճյուղերը երկրագործությունն ու անասնապահությունն էին, մյուս զբաղմունքներն ու արհեստները, այդ թվում՝ գորգագործությունը, կրում էին օժանդակ բնույթ: Ըստ որում, XIV–XV դարերից հետո գորգագործությունը միայն տնայնագործական էր, և նպատակաուղղված սեփական կարիքների կամ էլ կոնկրետ որևէ պատվերի բավարարմանը: Այն՝ ինչպես որ զարգացած միջնադարում էր, արդեն չուներ ապրանքային նպատակաուղղվածություն, նախատեսված չէր շուկայի համար, ուստի այդ տարածքներում գորգերի զանգվածային առևտուր չէր էլ կատարվում, և այդ տեղանուններն էլ անհայտ էին մնում գորգի մեծածախ առևտրով զբաղվողներին: Այդ տարածքներից, ժամանակի ընթացքում, եվրոպացի կաթոլիկ միսիոներների ու տեղացի մանր վաճառականների ձեռք բերած, ինչպես նաև ավարի ու թալանի միջոցով քոչվորների մոտ կուտակված հայկական գորգերը երբեմն վաճառահանվում էին առևտրական ուղիների վրա գտնվող բնակավայրերում՝ Թիֆլիսում, Թավրիզում, Շամախիում, Դերբենտում, Տիգրանակերտում (Դիարբեքիր), Կարինում (Էրզրում), Կեսարիայում, Ղուբայում, Ղազախում, Դանձակում (Գյանջա) և այլն: Ակնհայտ է, որ այս դեպքում ևս շրջանառությունից դուրս են մնում հայոց գորգագործական կենտրոնների հայահունչ տեղանունները:

Կովկասում և Փոքր Ասիայում ապրանքային գորգագործությունը նորից ծավալվում է միայն XIX դարի երկրորդ կեսից հետո: Այդ ժամանակներից էլ, հյուսիսարևելյան Անդրկովկասում (Շամախի–Ղուբա–Դերբենտ տարածաշրջան) և Փոքր Ասիայի արևելյան տարածքներում (Սպար-

---

31 Տե՛ս Մ ա կ ա ր Բ ա ր խ ո ւ դ ա ր յ ա ն. Աղվանից աշխարհ և դրացիք. Արցախ.– «Հայագիտական Մատենադարան», Երևան, 1999, Ն. Ա. Մ կ ր տ չ յ ա ն. Բուրդուրի բարրառի ձևաբանությունը.– ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1966, N 1, էջ 49:

տա, Ուշակ, Կեսարիա, Սեբաստիա և այլն) սկսվում է մեծ մասամբ հայկական ավանդական գորգերի գեղազարդումների հիմամբ ստեղծված վերամշակումների, ինչպես նաև նոր գծանկարներով գորգերի արտադրությունը, որոնք էլ շուկայում հայտնվում են այդ տարածքներում ապրող եկվոր վաչկատուն ցեղերի կամ այդտեղ գտնվող բնակավայրերի ու մերձակա առևտրի խոշոր կենտրոնների անուններով: Սակայն, հարկ է նշել, որ պատմամշակության այս անցուդարձի ուսումնասիրումն ու դրա հետևանքների բացահայտումը նույնպես չէր մտնում արևմտյան գորգագետների մեծ մասի հետաքրքրությունների շրջանակի մեջ: Այդ պայմաններում, գորգի համաշխարհային առևտրում և գորգարվեստի եվրոպացի ուսումնասիրողների կողմից օգտագործված տերմինների համակարգում, անշուշտ, չէին լինելու հայերին վերաբերողները: Գորդագետները, հիմնականում, առանց խորամուխ լինելու խնդրո առարկա թեմայի նախապատմությանը, տարածաշրջանում գորգարվեստի ծագումը ընդունում են միջինասիական քոչվոր ցեղերի տեղաշարժերով բացատրող, կողմնակալ ու հեռահար նպատակների համար ստեղծված տեսությունը: Իսկ ինչո՞ւ: Այս առիթով հարկ է անգրագառնալ տարածաշրջանի գորգերին տրված ընդհանրացված այն անվանումներին, որոնք մատնանշում են էթնոսի կամ էթնիկական խմբի վարած կենսաձևը կամ կրոնական համակարգը: Այդպիսիք են, մասնավորապես, «սելջուկյան», «քոչվորական» և «մուսուլմանական» գորգ հասկացությունները, որոնք գիտական ու առևտրական ոլորտներում կիրարկվում են արդեն շուրջ մեկ դար[32]: Հետագայում, 1920–30-ական թվականներին, այս տերմինները՝ իբրև որոշակի գաղափարախոսության կրողներ, նպատակաուղղվեցին գորգարվեստի բնագավառում իսլամական և մասնավորապես թուրք-սելջուկյան մշակույթի նշանակության ուռճացմանն ու դրա դերի չափազանցմանը: Այդպիսով, թուրքամետ գորգագետները և հատկապես գերմանացի արևելագետ Կուրտ Էրդմանն ու իր հետևորդները սելջուկ-թուրքմենական և մոնղոլական քոչվոր ցեղերի տարածաշրջան ներթափանցումը ներկայացնում են իբրև պատմական Հայաստանում և Փոքր Ասիայում տնտեսության ու մշակույթի զարգացման, իսկ որոշ աղբյուրների՝ մասնավորապես գորգագործության համար նաև սկզբնավորման գործոն[33]: Ըստ որում, այդ ամենը հիմնավորելու համար օգտագործվում է նաև վերը նշված «պազիրիկյան» գորգը, որը, թեև Կենտրոնական Ասիայի մշակույթի հետազոտող Ս. Ի. Ռուդենկոյի կարծիքով բնորոշ է առաջավորասիական մշակույթին և բացարձակապես օտար Կենտրոնական Ասիայի, այդ թվում նաև Լեռնային Ալթայի մշակույթին[34], «սելջուկյան» տեսության նշանավոր հետևորդներից Կ. Էրդմանի կարծիքով, այնուամենայնիվ դրծել են արևմտյան Թուրքեսանի բնակիչները՝ սելջուկների նախահայրերը[35]: Անշուշտ, այդ դաղափարը ընդունում և դարդացնում են թուրք մշակութաբանները: Ստամբու-

32 Այս մասին տես՝ Rudolf Neugebauer und Julius Orendi. Handbuch der Orientalischen Teppichkunde. Leipzig, 1909, S. 9–11, 83–91.

33 Kurt Erdman. Der Orientalische Knupfteppiche, S. 14.

34 С. И. Руденко. Նշվ. աշխ., էջ 49, 54:

35 K. Erdman. Die Geschichte der früher Turkische tepiche, p. 13–16.

լի համալսարանի պրոֆեսոր Ն. Դիարբեքիրլին արդեն մեր ժամանակներում գտնում է, որ այդ գորգի գեղազարդման մանրամասներն ու կատարման ոճը հատուկ էին Կենտրոնական Ասիայի Թուրք- օղուզական ցեղերի մշակույթին[35]: *Ակնհայտ է, որ այդ և նմանատիպ «ուսումնասիրողների» համար ոչ մի նշանակություն չունեն պատմական ճշմարտությունները: Նրանց առաջնահերթ ու կարևորագույն խնդիրը Թուրքական ցեղերին մշակութային քղամիդ հագցնելն է:*

Վերոհիշյալ տեսություններն, այդպիսով, հետապնդել են քաղաքական նպատակներ, և, ընդհանուր առմամբ զուրկ լինելով գիտական հիմնավորումներից, ուղղված են եղել միջազգային հանրության աչքում արմատավորված օսմանյան Թուրքերի էթնիկական ու մշակութային եղեռն իրականացնողի կերպարի պատկերացումը փոխելուն, տարածաշրջանի պատմամշակութային կյանքում մշակութային րուռն վերելք ապահոված գործոն ներկայացնելուն: Բայց գորդարվեստի ասպարեզում այս տարածաշրջան ի՞նչ ունեին բերելու սելջուկներն ու ալթայան ու միջինասիական ծագումով մյուս եկվորները:

Նախորդ էջերում մենք մի քանի անգամ դիմելով IX–XIII դդ. արաբական աղբյուրներին, ներկայացրեցինք գորգագործության բարձր մակարդակը Հայաստանում, ինչպես և Պարսկաստանի արևմտյան տարածաշրջանների գորգագործական կենտրոններում: Այդ նույն աղբյուրներում հիշատակություններ կան նաև միջինասիական ժողովուրդների զբաղմունքների, այդ թվում՝ ոստայնանկության մասին: Սակայն արտադրանքի թվում հիմնականում նշվում են կտորատեսակներ հագուստի, վրանի, փռոցներ և հատկապես թաղիք[37]: Այս վերջինս առավելապես բնորոշ էր Թուրքերին[38]: Գորգեր, պարզվում է, գործում էին միայն Խորեզմում և Մերվում[39]: Մեզ հայտնի չեն այդ գորգերի գեղազարդման մանրամասներն ու տեխնիկատեխնոլոգիական հատկանիշները, բայց գրավոր աղբյուրները հաղորդում են, որ այդ տարածաշրջանների իշխողները իրենց տիրակալների կամ հարևանների հետ եղած տարաձայնությունները լուծում էին վերջիններիս հայկական գորգեր նվիրելու ճանապարհով: Ըստ որում,դրանք այլ ծագում ունեցող գորգերից տարբերակում էին հենց «հայկական» անունով[40]: Մուքտադիր խալիֆին 911 թվականին հայկական գորգեր է նվիրել նաև Ատրպատականի էմիր Յուսուֆ Աբու Սաջը, և սա այն դեպքում, երբ գորգագործության կենտրոն էր նաև նրա աթոռանիստ Թավրիզ քաղաքը:Հարկ ենք համարում նորից նշել, որ այս ամենը հիմնականում վերաբերում է VII–X դդ., այսինքն նախքան սելջուկների և նրանց հաջորդած քոչվոր այլ ցեղերի հետագա մուտքը Հայկական լեռնաշխարհ ու մերձակայք:

---

36 N e j a t D i y a r b e k i r l i. New Light on the Pazirik Carpet (translated from Turkish by Alan Melaart).– Hali, The International Yournal of Oriental Carpets and Textiles. Vol. 1, London, 1978, No. 3, p. 216–221.

37 Материалы по истории туркмен и Туркмении. (VIII-XV вв.). Арабские и персидские источники, т. 1, М.—Л., 1939, с. 128,135,146,150,174,202 *և այլն:*

38 Նույն տեղում, էջ 202:

39 Նույն տեղում, էջ135, 146:

40 Նույն տեղում, էջ 238: A. M e ц. *Նշվ. աշխ., էջ 360–380:*

Այսպիսով, ակնհայտ է, որ Միջին Ասիայից կամ Լեռնային Ալթայից Առաջավոր Ասիա ներթափանցած քոչվոր ցեղերը, ծանոթ չլինելով գորգագործության ավանդույթներին, իսկ լավագույն դեպքում չունենալով զարգացած ավանդույթներ, չէին էլ կարող այդ զբաղմունքը ներմուծել տարածաշրջան ու գեռ դրա զարգացման գործոնն էլ դառնալ: Ուրեմն, ի՞նչ խոսք կարող է լինել «սելջուկյան», «քոչվորական» և «մուսուլմանական» գորգ հասկացությունների և մասնավորապես Հայաստանում ու հարակից տարածքներում գորգագործության առաջացումը գրանց հետ կապելու մասին: Առհասարակ, ինչքանո՞վ է քոչվորական տնտեսաձևը հարմար գորգագործությամբ զբաղվելու համար, քանի որ այդ պարագայում, ակնհայտ է տևական ժամանակի, լուսավոր ու չոր տարածքի և, մանավանդ, բնակության հիմնական վայրի անհրաժեշտությունը: Բացի այդ, գորգ գործելու զանգվածեղ հարմարանքը՝ տորքը, նպատակահարմար չէ անընդհատ տեղից տեղ փոխադրել, իսկ կիսավարտ գորգը առհասարակ ենթակա չէ տեղափոխման: Ընդհանրապես, այս կապակցությամբ շատ ավելի համոզիչ ու պատկերավոր առարկություն ունի Շուշիի Փանահ խանի վեզիրը՝ XVIII դ. ապրած նշանավոր աշուղ Վագիֆը: Իր ստեղծագործություններից մեկում նա գրել է.

..Եթե դեղջկուհու իրանը նուրբ է ջնարակի նման,
Նա արժանի է ոչ թե հանայի (գորգագործի տորք հաստոց— Ա.Պ), այլ հինայի:
Քոչվորն անտուն է, հանգրվան չունի,
Միթե կարող է նա հանային հարմարվի[41]:

1880-ական թվականների Շուշվա գորգագործության վերաբերյալ կատարած դիտարկումներում Յա. Զեգենիձեն պարզել է, որ տեղի մահմեդականների պատկերացումներով գորգագործի տորքը համարվում է «չար սատանայի հորինած հարմարանք»[42]: *Այդպիսով, բացի այն, որ քոչվորական տնտեսաձև վարելուն անհարիր էր գորգագործությամբ զբաղվելը, գրանց մի մասի հոգևոր պատկերացումներին այդ զբաղմունքը առհասարակ խորթ ու անընդունելի էր: Ավելին, դրան վերադրում էին սատանայական ծագում:*

Հայտնի է, որ քոչվորների հիմնական զբաղմունքը անասնապահությունն էր: Բացի անասնապահությունից, ուրիշ ինչո՞վ էին զբաղվում Հայկական լեռնաշխարհում տեղավորված քոչվորները: Ադրբեջանցի պատմաբան Վ. Լեվիաթովը իր ուսումնասիրություններով պարզել է, որ Մուգանի տափարակներում և Արցախի ցածրադիր մասերում ձմեռող ու մարտից սեպտեմբեր ամիսը Այունիքի, Արցախի ու Գարգման-Տավուշի լեռնային արոտատեղիներում ապրող քոչվորները «քոչի ճանապարհին

---

41 Л. К е р и м о в. Азербайджанский ковер. Баку, 1983, с. 121 *(թարգմ. — Ա. Պ.).*

42 Я. З е г е н и д з е. Город Шуша. Производство ковров и паласов.— Сборник материалов для описания местностей и племен Кавказа (далее— СМОМПК) ,вып. X1, Тифлис, 1891, с. 47—48.

զբաղվում էին թալանով և իսկական աղետ էին նստակյաց բնակչության համար»[43]: Մինչդեռ, պատմական Արցախի մաս կազմող Ելիզավետպոլի գավառում մահմեդականներով բնակեցված 69 գյուղից 42-ը պատկանում էր քոչվոր ցեղերին, հինգը կիսաքոչվորներին[44]: Անշուշտ, քոչվորական տնտեսություններում ևս զբաղվել են գորգագործությամբ, բայց այդ պայմաններում ի՞նչ քանակի և որակի գորգագործության մասին է խոսքը, և մանավանդ, ի՞նչ կարևորություն կարող էր այն ունենալ հայոց գորգարվեստի մի այնպիսի խոշոր ու ավանդական կենտրոնի համար, ինչպիսին Արցախն է: Մինչդեռ Վ. Լեվիաթովը, անդամ իր իսկ դիտարկումների պարագայում, գրում է, որ XVIII դարում Արցախը առավելապես հայտնի էր քոչվորական արտադրանքով գորգերով և կարպետներով[45]: Ուրեմն, լավ է, որ այդ առթիվ մենք ունենք, ի տարբերություն Լեվիաթովի, հենց այդ դարաշրջանում ապրած և այդ ցեղերի կենցաղին քաջածանոթ աշուղ Վագիֆի կարծիքը:

Արցախը հայտնի է եղել առավելապես քոչվորական արտադրանքի գորգերով ու կարպետներով, ուստի անհրաժեշտ ենք համարում շեշտել, որ՝

ա. վերը բերված պատմաազգագրական տվյալների ու փաստարկների վկայությամբ գորգագործությունը հատուկ չի եղել քոչվորական կենսաձևին,

բ. Արցախը միշտ եղել է հայաբնակ՝ հայոց էթնիկական գերակշռությամբ:

Վերջին հանգամանքի կապակցությամբ նշենք, որ Ռուսաստանին միանալուց հետո էլ, երբ այն վերաբաժանվում է չորս գավառի և դրանց կազմն են մտցվում քոչվորներով ու կիսաքոչվորներով բնակեցված մերձակա տարածքները, այնուամենայնիվ, հայերի տեսակարար կշիռը այդ գավառներից յուրաքանչյուրում հայտնված մյուս էթնիկական միավորների նկատմամբ՝ ինչպես նախորդ դարերում էր[46], դարձյալ մնում էր գերակշիռ: Բնականաբար, գորգերով ու կարպետներով Արցախի հայտնի լինելու հանգամանքը չէր կարող առնչություն ունենալ քոչվորների լինել-չլինելու ու առհասարակ «քոչվոր» հասկացության հետ: Այս կապակցությամբ, կարևոր հետևությունների տեղիք են տալիս վիճակագրական տվյալները: Պարզվում է, որ 1885 թ. մարդահամարի համաձայն, նահանգի ամենախոշոր՝ Ելիզավետպոլ գավառում հայերը կազմում էին բնակչության 35 տոկոսը, մահմեդականները՝ 54 տոկոսը[47]: 1895 թ. վիճակագրության տվյալներով Շուշի գավառում հայերը կազմել են բնակչության 58 տոկոսը[48]: Այդ նույն ժամանակ Շուշի քաղաքի բնակչության կեսից ավե-

---

43 В. Н. Л е в и а т о в. Очерки из истории Азербайджана в XVIII веке. Баку, 1948, с. 40.

44 Н. А. А б е л о в. Исследование экономического быта государственных крестьян Елизаветпольского уезда Елизаветпольской губернии, Тифлис, 1887, с. 12; История Азербайджана,т. II, под редакцией Н. А. Гусейнова, А. С. Сумбатзаде и др., Баку, 1960, с. 25—26, 59—60.

45 В. Н. Л е в и а т о в. *Նշվ. աշխ., էջ 55:*

46 *Այս մասին տե՛ս՝* Грамоты и другие исторические документы XVIII столетия, относящиеся к Грузии. 1768-1774 гг. Т. I, СПб., 1891, с. 434.

47 И. А. А б е л о в. *Նշվ. աշխ., էջ 12–13:*

48 Ե ր վ ա ն դ Լ ա լ ա յ ա ն. Երկեր հինգ հատորով. հ. 2, Երևան,1988,էջ 49:

լին նույնպես հայեր են եղել[49]: Բայց այդ թվերն էլ դեռ կարիք ունեն մեկնաբանման: Բանն այն է, որ մահմեդականների թվային բարձր տոկոսը արդյունք է տարածաշրջան մուտք գործած թափառական կենսաձև վարող միջինասիական ծագումով այսպես կոչված «կովկասյան թաթարների», ավշարների, կարափափախների, թարաքյամանների, ջևանշիրների և տեղական մահմեդական բնակչության պարսիկների, քրդական և կովկասյան ծագում ունեցող մի շարք այլ ցեղերի ընդհանուր թվաքանակին: Իրականում, դրանցից յուրաքանչյուրը առանձին վերցրած անհամեմատ ավելի քիչ տոկոս էր կազմում ընդհանուրի մեջ, քան հայերն էին: Եվ բացի այդ, դրանց մեծ մասի հիմնական զբաղմունքը վերոհիշյալ Վ. Լեվիաթովի գիտարկումների համաձայն, ամենևին կապ չուներ գորգ գործելու հետ: Կարծում ենք, տեղին է այստեղ հիշել, որ XIX–XX գգ. արցախահայերի գորգագործությամբ զբաղվելու մասին, ի տարբերություն ադրբեջանցի և արևմտյան թուրքամետ գորգագետների, բազմիցս նշում են Արցախի գորգագործական կենտրոններում հետազոտություններ կատարած ուսումնասիրողներ Ի. Աբելովը և Մ. Իսաևը: Ըստ որում, նրանք չեշտում են, որ հայոց գործած գորգերը աչքի էին ընկնում տեխնիկատեխնոլոգիական ու գեղարվեստական լավագույն հատկանիշներով[50]:

Այսպիսով, Արցախում և շրջակա գորգագործական կենտրոններում պատմամշակութային ավանդույթներ ունեցող բնիկ ժողովուրդների թվում ակնհայտորեն գերակշռում էին հայերը, և իրականում Արցախն էլ առավելապես հայանի էր հենց նրանց արտագրած գորգերով ու կարպետներով: Ընդհանուր առմամբ, այդպիսին էր գորգագործության պատկերը նաև Հայաստանի պատմաազգագրական մյուս շրջաններում:

Վերը շարադրված պատմաազգագրական նյութերը հնարավորություն են տալիս որոշակի պատկերացում կազմելու Հայկական լեռնաշխարհում և առհասարակ Առաջավոր Ասիայում գորգագործության ծագումնաբանության ընթացքի ու հետագա դինամիկայի մասին: Այդ նյութերը փաստում են գորգարվեստի ասպարեզում տեղական վաղնջական ավանդույթների գոյությունն ու դրանց անընդհատ զարգացման, հարստացման բազմաբնույթ դործընթացը: Միաժամանակ, դրանցից ակնհայտ է դառնում, որ վերջին հազարամյակի ընթացքում կատարված ժողովրդագրական բազմաթիվ բուռն ու լայնածավալ տեղաշարժերը նկատելիորեն պետք է ազդած լինեին հայոց գորգերին ընորոշ դեղազարդման, ինչպես նաև տեխնիկատեխնոլոգիական առանձնահատկություններին: Սակայն մեր կատարած հետազոտությունները մատնանշում են նաև, որ չնայած եղած ազդեցություններին, այնուամենայնիվ, մինչև մեր ժամանակներն էլ հիմնականում պահպանվել են հայոց ավանդական գորգարվեստին բնորոշ դեղազարդման տարրերը, դրանց մատուցման ձևերն ու գունային լուծումները[51]: Այդ հետազոտություններից պարզվում է նաև, որ հայոց գոր-

---

49 Я. З е г е н и д з е. Նշվ. աշխ., էջ 1:

50 И. А. А б е л о в. Նշվ. աշխ., էջ 97, М. И с а е в. Ковровое производство Закавказья, Тифлис, 1932, с. 123.

51 Ա. Պ ո ղ ո ս յ ա ն. Վիշապագորգերի ծագումնաբանության ու տարածման արեալների հարցի շուրջ.– «Հայ ժողովրդական մշակույթ», Հանրապետական գիտական նստաշրջան, IX (զեկուցումների հիմնագրույթներ). Երևան,1997, էջ 51–52:

գարվեստին բնորոշ հիմնական հատկանիշներից է զարդանախշերի ու հորինվածքների ոճավորումը, դրանց միջոցով որոշակի իմաստ ու ծիսապաշտամունքային պատկերացումներ արտահայտելը: Հայոց մեջ գորգագործության հնամենի ավանդույթների առավել համոզիչ փաստարկներից է գորգագործության ծիսականացված ընթացքը, և այդ ծեսում գորգագործի իբրև ծեսի առաջնորդ ներկայանալը[52]:

Այսպիսով, հիմքեր չունենք կասկածի տակ դնելու վերը շարադրված պատմաաղգագրական տվյալների հավաստի լինելը: Դրանք հիմնականում գրավոր, օտարալեզու աղբյուրներ են՝ մեծ մասամբ ունեն պարսկաարաբական ծագում և դրանց հեղինակները չպետք է որ առանձնապես շահագրգիռ լինեին հայ ժողովրդին ավելորդ բարեմասնություններ վերագրելուն: Ուստի, հիմնազուրկ ու միտումնավոր են տարածաշրջանում գորգագործության ծագումը սելջուկների և այլ եկվոր ցեղերի մշակութային ազդեցությամբ բացատրող տեսությունները: Ավելին: Հայկական լեռնաշխարհում ու հարակից գորգագործական կենտրոններում տեղի ունեցած պատմամշակութային գործընթացների ու էթնիկական լայնածավալ տեղաշարժերի ուսումնասիրությունից պարզվում է, որ տարածաշրջանի գորգագործական կենտրոնների մեծ մասը ձևավորվել է հայոց գորգարվեստի ազդեցությամբ: Հայկական մշակութային տարածքի փոքրասիական, բալկանյան ու հյուսիսարևելյան Անդրկովկասի գորգագործական կենտրոններում լայն տարածում ստացած հայկական ավանդական բազմաթիվ գորգատիպեր հաստատում են այդ իրողությունը:

Եզրափակենք. Հայկական լեռնաշխարհը գորգի հնամենի օրրաններից է, իսկ հայ ժողովուրդը՝ դրա ստեղծողներից մեկը:

К ВОПРОСУ О ВОЗНИКНОВЕНИИ КОВРОТКАЧЕСТВА В АРМЕНИИ

АШХУНДЖ ПОГОСЯН

Резюме

Начиная с XX в. среди ковроведов и в сферах торговли ковров главенствовало понятие "сельджукский" или "кочевой" ковер. Многочисленные типы армянских и переднеазиатских ковров еще в начале века определялись по названиям кочевых и полукочевых племен среднеазиатского происхождения или по названиям их поселений ("Тавриз", "Гянджа", "Ширван", "Дербент", "Туркмен", "Афшар", "Шахсеван", "Белудж", "Бахтиар", "Караман" и др.). На основе этого ряд исследователей (В. Боде, А. Уфам-Пооп, К. Эрдман и др.) связывают возникновение ковроткачества в Армении и вообще в Передней Азии с вторжением тюрко-сельджукских племен. В статье отрицается эта теория и на основе исторических первоисточников (ковры и обрывки ковров, относящихся к II—I тысячелетиям до нашей эры, арабские и другие письменные и изобрази-

---

52 Ա. Պողոսյան. Գորգի ծիսապաշտամունքային հարցի շուրջ.— «Պատմա-բանասիրական հանդես», 2000, N 1, էջ 125–132:

вторжением тюрко-сельджукских племен. В статье отрицается эта теория и на основе исторических первоисточников (ковры и обрывки ковров, относящихся к II–I тысячелетиям до нашей эры, арабские и другие письменные и изобразительные источники XI–XIIвв.) обосновывается факт существования традиции коврового искусства на Армянском нагорье до вторжения сельджуков в XI–XII вв. На основе изучения технико-технологических особенностей ковроткачества представляется невозможной их принадлежность к кочевому образу жизни, следовательно, безосновательно и само понятие "кочевой ковер". Тем более, что в вышеупомянутых источниках среди перечисленных занятий кочевых племен не встречается ковроделие. Теория, обьясняющая возникновение ковроткачества в регионе вторжением тюрко-сельджукских племен изначально имеет политический характер. Она в общем нацелена на изменение образа османских турок как исполнителей этнического и культурного геноцида, и при этом представляет их как фактор, который обогатил культурный мир региона и обеспечил бурное развитие культуры в исторической Армении, а также в Передней Азии в целом. Таким образом, ранние находки ковров и ковровых изделий, обнаруженных на Армянском нагорье, и многочисленные свидетельства письменных источников последующих веков позволяют заключить, что Армянское нагорье – одна из колыбелей ковроделия, а армянский народ – один из его создателей.

TO THE QUESTION OF THE ORIGIN OF RUG WEAVING IN ARMENIA

ASHKHUNDJ POGHOSYAN

S u m m a r y

The author disputes the ideas of "Seldjuk rug" or "Nomadic rug" which dominated among the rug managers and rug dealers from the beginning of the 20th century and calling the numerous Armenian and Advanced Asian rugs by the names of the nomadic tribes or their settlements. Meanwhile on the basis of it a lot of investigators connect the beginning of rug weaving in Armenia and on the whole in the Advanced Asia with invasion of the Seldjuk-Turkish tribes. Basing on the different historical sources (rugs and parts of rugs of the III milleniums among them the rug "Pasirik" of the 5th century, Arabian written and picture sources) the author grounds the existence of rug weaving traditions in the Armenian upland before the Seldjuk invasion (11th-12th cc.) and shows the political background of presenting those rugs as of the Seldjuk origin. The author shows that from the point of view of the rug weaving technique and technology peculiarities there is no foundation for representing them as "nomadic rug". The earliest examples of rug discovered in the Armenian upland and the following written evidences let us make a conclusion that the Armenian upland is one of the most ancient cradles of rug weaving. In the author's opinion the theory of explaining the origin of rug weaving in this district by the invasion of the Seldjuk-Turkish tribes aims to extenuate the Turks' fault for ethnic and cultural crimes and to introduce them as a factor which provided the historical-cultural development of the region.